

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՏՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐՈՒ ԵՊԱՍՏԸ ԹՈՒՐԳԱԿԱՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻՆ

Թանգիմաթի բերած կարգ մը նորութիւններու և բարեկարգութիւններու շնորհիւ Օսմանյան կայսրութեան սահմաններուն մեջ ապրող ոչ իսլամ հայրենակիցներու որոշ չափով հավասար իրավունքներ տրվեցան: Հայերը կարողացան այս իրավունքները լավագոյնս օգտագործել: Անոնք զարկ տվին թե՛ իրենց մշակութային գործունեութեանց և թե՛ մեծապես սատարեցին երկրի մշակութային և տնտեսական վերելքին:

Հստ պատմական տվյալներու, օսմանյան հպատակ հայերը թուրքերեն շատ ավելի առաջ Արևմուտքի հետ հարաբերութեան մեջ մտնելու հնարավորութիւնը ունեցեր էին:

Հայերու մոտ հասարակական և կրթական մտքի զարգացումը թանգիմաթի հռչակումէն առաջ որոշ մակարդակի հասած էր արդեն: Արդարեւ, անոնք ի մասնավորի հիմնած ըլլալով իրենց տպարանները, ուսումնարաններն ու կրթական ընկերութիւնները, հասցված ըլլալով մտավորական ընտրանի սերունդ մը, հաջողած էին իրենց մեջ հասարակական ու մշակութային բարեկարգութեան զաղափարը տարածել: Հետևաբար հայերն արդեն վաղուց նախապատրաստված էին հետագային պետականորեն մշակված և «Թանգիմաթը հայրիկ» կոչված բարեկարգութեան մը ծրագրի իրականացման գործին:

Իրոք ա, և՛ Թանգիմաթի շրջանին (1839—1870 թթ.), և՛ հետագա շրջաններուն հայերը մեծ ավանդ ներդրեցին երկրի քաղաքակրթական գործին: Պետք է անպայման նշել, թե հայերն էին, որ նախ ստեղծեցին իրենց ազգային սահմանադրութիւնը և ապա նպաստեցին 1876 թվականի Օսմանյան պետութեան առաջին սահմանադրութեան ծնունդին:

1863 թ. հայոց ազգային սահմանադրութիւնը, որ կը կոչվեր «Նիզամնամէի Միլլեթի էրմենիան», կազմված էր զեմեկրատական հաս-

կացության հիման վրայ: Սահմանադրության հանձնաժողովին կ'անդամակցեր ծանոթ իրավագետ Գրիգոր Օտյանը:

Ըստ Թուրքական արխիվային փաստաթուղթերու վկայության, այդ նույն անձնավորութիւնն էր, որ Միտհաթ փաշայի թելադրութեամբ պատրաստած էր նաև առաջին թրքական պետական սահմանադրութեան կանոնադիրը, որ կը կոչվեր «Քանունը էսասի»:

Որպեսզի հնարավոր ըլլա մանրագնին կերպով ուսումնասիրել հայերու՝ թուրք մշակութին և տնտեսութեան բերած բազմակողմանի և անժխտելի նպաստը, պետք է ձեռք առնել անոնց գործունեութեան բնագավառները:

Մենք այժմ կ'ուզենք ծանրանալ այդ բնագավառներն մեկուն՝ Օսմանյան կայսրութեան մեջ հայկական տպագրութեան արվեստին և թրքական տպագրութեան գործին հայերու բերած նպաստի վրայ:

Օսմանյան կայսրութեան մեջ տպագրված առաջին թրքերեն գիրքը «Քիթաբը լյուկաթը վանքուլուն» է, որ 3 հունվար 1729 թ. լույս է տեսած Կ. Պոլսո մեջ: Այդ բառգիրքը տպված է 14/16 դեկտեմբեր 1727-ին, արքունի թիկնապահներեն, հունգարական ծագում ունեցող Իբրահիմ աղայի ջանքերով հիմնված տպարանին մեջ: Գիրքի հրատարակութեանն մինչև այսօր անցած է 255 տարի:

Կարգ մը թուրք հետադոտողներ կը սխալին, երբ կը կարծեն, թե Թուրքիո մեջ հիմնված առաջին տպարանը վերոհիշյալն է: Մինչդեռ իրականութիւնն է այն, որ նախապես կատարված որոշ նախաձեռնութիւններու արդյունք է Թուրքիո մեջ հիմնված այդ տպարանը: Հետեաբար առանց երկար մանրամասնութիւններու միջամուկս ըլլալու, կը փափագինք կանգ առնել այդ շարժումներու մեկ մասի սկզբնավորութեան, դարգացումին և անոնց կատարած դերին վրայ:

Թուրքիո մեջ տպագրական արվեստի ստեղծման համար ճանապարհ բացող գլխավոր գործողներ հանդիսացած են Ելրոպայի մեջ արարական տառերով կատարված հրատարակութիւնները, եվրոպական լեզուներով թուրքերեն լեզվի քերականութեան և բառգիրքերու տպագրութիւնը, Եվրոպայեն Կ. Պոլիս բերված գիրքերու վաճառքը, ինչպես նաև Օսմանյան կայսրութեան սահմաններուն մեջ իրենց գոյութիւնը պահպանող հրեաները, հայերը և հույները և այլ տարրեր, որոնք իրենց լեզվով հրատարակութիւններ կատարելու համար տպարաններ հիմնած էին Թուրքիո մեջ:

Պրոֆ. Ավրամ Կալանթին իր «Թուրքերն ու հրեաները» աշխատութեան մեջ կը գրէ, թե Կ. Պոլսո մեջ առաջին տպարանը հիմնած են

հրեաները դեռ 1492 թվականին: Իսկ Ֆիրմեն Տիտոն կը նշէ, որ Յասէֆի որդի Օրէոնը 1490-ին Կ. Պոլսո մեջ գրած է «Եբրայեցիներու պատմութիւնը»: Մաքսուրիզատեն «Նեթայիճյուլ վուքուաթ» (Դեպքերու հետեւականքը) անունով իր երկին մեջ կը խոսի, թե արաբական տառերով գիրքեր տպագրելու և ադոնք առանց մաքսատուրքի թուրքիա մտցնելով, ժախելու համար, 1587 թվականին սուլթան Մուրադ Գ-ի կողմէ հրովարտակ մը հանձնված է օտարականի մը: Այդ հրովարտակը ստացող Պրանթոն Պանտիէի և Օրացիո Պանտիի անվանակոչյալ երկու վաճառական եղբայրներ, առաջին անգամ թուրքիա մտցուցած են «էօքլիտեսի» (էվկլիդես) արաբերեն թարգմանութիւնը՝ 1594-ին Հոռոմ տրպագրված «էօքլիտեսի երկրաչափութիւնը» («Թահրիր-ու էօքլիտես ֆի ուսուլ իլ հենտեսես»): Սուլթան Մուրադ Գ-ի նշված հրովարտակն ալ իր մեջ պարունակող այս գիրքը վաճառքի հանված է Կ. Պոլսո մեջ:

Հրեաները, որոնք առաջին տպարանները հիմնած են 1483-ին Կ. Պոլսո, 1515-ին Սելանիկի և 1534-ին Ադրիանապոլսի (էդիրնէ) մեջ, 1495 թվականին ի վեր այս տպարաններուն մեջ լույս ընծայած են եբրայերեն լեզվով «Աստվածաշունչ»-ը, մեկնութիւններ և քերականութիւն դասագիրքեր: Ծանոթ է, որ եբրայատառ առաջին «Աստվածաշունչ»-ը է. Կ. Պ. Մոզիոյի կողմէ տպագրված է 1547-ին Կ. Պոլսո մեջ:

Հրեաներէն հետո հայերն ու հույներն ալ տպարաններ հիմնած են թուրքիա: Մասնավորաբար հայերը այս մարդին մեջ չեն բավարարված միայն իրենց մշակույթի զարգացման նպաստելու ջանքեր կիրառելով, այլ միևնույն ատեն նպաստած են թուրքական տպագրութիւն և ամբողջ երկրի մշակույթի զարգացումին: Նկատի առնելով այս հանգամանքը, մեր փափազն է համառոտ կերպով ներկայացնել Օսմանյան կայսրութիւն հպատակ հայերու կատարած գործունեութիւնը տպագրութիւն բնագավառին մեջ, որը բավականին լայնորեն հետադուտված է մեր կողմէ:

Թուրքիո մեջ տպագրութիւն նախակարապետը հանդիսացող Աբգար Դպիր Եվդոկիացին (Թոխաթցի) 1562 թվականին էջմիածնի Միքայել Սեբաստացի կաթողիկոսին կողմէ Հոռոմ ուղարկված պատվիրակութիւն նախագահն էր: Հայ թագավորներէն Սենեքերիմի սերունդէն Աբգարը, որը Պիոս Դ պապէն և Վենետիկի դուքս Հերոնիմոս դոժն արտոնութիւն ստացաւ հայիրեն գիրքեր տպելու, առաջին անգամ 1565-ին իր լույս ընծայած «Սաղմոսարան»-ը ձոնեց պապին: Հետո իր որդի Սուլթանշահի հետ մեկտեղ տպագրական մեքենաներն ու կալմածներն առնելով՝ գնաց Կ. Պոլիս, ուր ձեռքակալվեցաւ: Որոշ ատեն

մը վերջ ազատ արձակվելն հետո, Գումգաբուի արվարձանին Լանկա թաղի ս. Նիկողայոս եկեղեցիին մեջ հիմնեց արևմտահայերու առաջին տպարանը: Ասիկա 1483-ին հրեա Րաֆֆի-Կերստնի կողմն Կ. Պոլսո մեջ հիմնված առաջին տպարանն էր երկրորդը կը հանդիսանար: Աբգար Թոխաթցին 1567—1569 թվականներուն ալոտեղ 6 գիրք տպագրեց: Ասոնք Թուրքիո մեջ տպված առաջին հայերեն գիրքերն էին: Աբգար Դպիրեն վերջ Կ. Պոլսի երկրորդ հայկական տպարանը հիմնեց անվանի մատժող և պատմագիր Նրեմիա Չելեպի Քյոմուրճյանը՝ Գումգաբուի Գառերկա թաղը: Սակայն ույս տպարանի կյանքը կարճատև եղավ (1677—1678): Նրկու գիրքեր տպագրելն վերջ փակվեցավ: Տարակարծության հետևանքով իր գործակիցն՝ Գրիգոր Մարզվանցիին, բաժնը վող Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին 1699-ին տպարան մը հիմնեց: Աստվածատուրի մահն էր (1748) անոր որդիները՝ Հովհաննեսը, Մինասը և Հարությունը տպագրական և հրատարակական գործը շարունակեցին 26 տարի (1750—1776): Այդ թվականն էր տպարանը անցավ Ապուլեխցի Հովհաննես Արապյանին:

Նույն տարին Մարզվանցի Գրիգորը Նրեմիա Չելեպի Քյոմուրճյանի տառերու օրինակով նոր տառեր ձուլեց և հիմնեց չորրորդ տպարան մը, որ իր գոյության 45 տարիներու ընթացքին տպագրեց 14 անուն գիրք (1698—1734 թթ.): Սարգիս դպիրն ու անոր որդին՝ Մարտիրոս Սարգիսյանն ու թոռները իրենց տպարանին մեջ տպեցին 38 գիրք: Այդ միջոցին, 1730-ն սկսյալ, Կ. Պոլսո մեջ բացվեցան գրախանութներ: Անոնցմե՝ առաջինն էր Աստվածատուր դպիրի գիրքերը վաճառող էրզրումցի Մանուկի գրախանութը:

Անկե հետո, կարգով, Սեբաստացի ռակեղձող Բարսեղ և Հակոբ հղբայրներու 1735 թվականին հիմնած տպարանը 5 տարի վերջ՝ իր տերերու մահվան հետևանքով, անցավ Բարսեղի որդիներուն՝ Գաբրիելին, Սարգիսին, Աստվածատուրին և Միքայելին: Այս տպարանին մեջ 1736—1755 թվականներուն տպագրվեցան 6 գիրք: Այս ժամանակաշրջանին է, որ երևան կուգան վիմատիպ նկարները՝ տպագրված գիրքերուն մեջ: Իսկ 1734—1746 թվականներուն Աբրահամ Թրակացին կը տպագրե տասն ավելի գիրքեր:

1766-ին Հովհաննեսի և Հակոբի կողմն հիմնված տպարանին մեջ առաջին անգամ կը հանդիպինք տառաձուլիչ Պողոսին (Հովհաննեսի որդին է, յսուհետև կհիշենք Արապյան կամ Արապօղլի անունով): Այստեղ մինչև 1769 թվականը տպագրվեցան 7 գիրք: Ստեփանոս Պերպեր-

յանին տպարանին մեջ տպագրվեցավ 8 գիրք (1770—1792 թթ.): Հովհաննեսն ու իր որդին Պողոսը, 1777-ին Աստվածատուր Դպիրի տպարանին մեկ մասը գնելով, մինչև 1796 թվականը միասին աշխատեցան: Հովհաննեսի մահն վերջ Պողոս Արապյանը որդիներուն հետ իր գործունեությունը շարունակեց մինչև 1841 թվականը և լույս ընծայեց 150 գիրք: 1792-ին Գումգարուի մայր եկեղեցիին մեջ հիմնած տպարանը մինչև 1825 թվականը շարունակեց իր գոյությունը: Հովհաննես Մյուհենտիսյանը 1840—1873 թվականներուն տպագրեց բազմաթիվ հայերեն և հունարեն գիրքեր: Այս անձերու անունները, որոնք նշեցինք՝ XVI, XVII, XVIII և XIX դարերուն, Կ. Պոլսո մեջ գործող հայ տպարանատերերն են, շոռանալով նաև, որ Օսմանյան կայսրության սահմաններուն մեջ Կ. Պոլսն զատ վան (վարագա վանք) և Մուշ (Գլակի վանք) քաղաքներուն մեջ Մկրտիչ Խրիմյան վարդապետը (հետագայում արևմտահայերու պատրիարքը և ապա էջմիածնի կաթողիկոսը) հիմնած է տպարաններ (1855—1862 թթ.):

Օսմանյան կայսրության սահմաններուն մեջ 1567-են մինչև 1922 թվականը Կ. Պոլսո մեջ՝ 131, իսկ գավառներու մեջ հիմնված 63 տպարաններն լույս տեսած հայերեն լեզվով և հայատառ թուրքերենով լրագիրներու և ամսագիրներու թիվը 598 է:

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան գրադարաններու, Նրևանի Ալեքսանդր Միասնիկյանի անվան գրադարանին, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին և Հայաստանի Արվեստի և Գրականության թանգարանի գրադարանին մեջ ցարդ կատարված պրպտումներու համաձայն, մինչև 1850 թվականը, այսինքն՝ 283 տարիներու ընթացքին լույս տեսած գիրքերու թիվը 525 է, որոնց 14-ը անթվակիր են:

Հայերեն ու հայատառ թուրքերեն լույս տեսած են հազարավոր կրոնական, եկեղեցական, լեզվաբանական, պատմական, աշխարհագրական, գրական (վեպ, չափածո, երգիծանք, թատերգություն), մանկավարժական, ուղեգրական, տրամաբանության, փիլիսոփայության վերաբերյալ երկեր, անթղլոգիաներ, բառարաններ, հուշագրություններ, օրացույցներ, տարեգիրքեր, դասագիրքեր՝ գրված հայ հեղինակներու կողմից, ինչպես նաև թարգմանություններ: Օսմանյան կայսրության մեջ տպագրված հայատառ թուրքալեզու գիրքերու և ամսագրերու քանակը կը հասնի 1000-ի: Թուրքիո պատմության և գրականության առնչությամբ մեծ կարևորություն ներկայացնող այս հրատարակություններու գերակշիռ մեկ մասը կը գտնվի Վենետիկի և Վիեննայի մատենադա-

բանները: Կ. Պոլսո հայկական տպարանները լույս ընծայած են նաև թուրքերեն լրագրեր ու ամսագրեր:

Այս հաշվառման աղյուսակը, որ կը ներկայացնենք, իր մեջ կը բովանդակե Օսմանյան կայսրութեան մայրաքաղաք Կ. Պոլսո և գալանական այլ և այլ շրջաններու մեջ գործունեութիւն ցույց տվող հայկական տպարաններեն լույս տեսած հայերեն լրագրերու և պարբերականներու քանակը:

Օսմանյան Թուրքիայի մեջ հայկական տպարաններու գտնված վայրեր և այդ վայրերը տպված հայերեն ու հայատառ թուրքերեն քերքերու, պարբերականներու և գիրքերու մոտավոր քանակը (1565—1922)

Տպարանի վայրը	տպ. քանակը	հայերեն և հայատառ թուրքերեն պարբ. քանակը	հայ. զրքերու քանակը
Իստանպուլ (Կ. Պոլիս)	131	397	324(1801—1850)
Ատանա	8	14	—
Ատափաղար	2	2	5
Ամարա	—	1	—
Ամասիա	2	2	—
Արմաշ	1	1	15(1864—1879)
Ալեքսալ	1	9	—
Պարտիզակ	2	8	—
Պիթիս	—	1	—
Պրուսա	—	2	2
Դիարբեքիր (Տիգրանակերտ)	—	5	—
Դյուրթյուլ	—	3	—
Էտերնե (Ադրիանապոլիս)	1	—	—
Էրզրնեան (Երզնկա)	1	2	—
Էրզրում (Կարին)	1	8	1
Կադղղվան	—	1	—
Կըլման	—	1	—
Կիլիսուն (Կիլիսուն)	1	3	1
Քարբեք	1	10	1
Իզմիր (Ջմյուռնիա)	15	53	140(1835—1850)
Իզմիր (Նիկոմիտիա)	2	6	—
Գարահիսար	—	1	—
Կարս	1	4	—
Կեսարիա	1	6	—
Կըման	1	2	—
Գոնիա	1	2	—
Նիսսահեմ	3	1	131
Մալաթիա	—	1	—
Մարաշ	1	4	—
Մերզիֆոն (Մարզվան)	3	5	9
Մուշ	1	4	—
Մուհնուսուն	1	1	1
Սամսուն	1	1	—

1	2	3	4
Սերաստիա	2	1	2
Սիմբիհիսաբ	1	1	—
Ուրֆա (Եղեսիա)	—	1	—
Շատախ	—	3	—
Շապինքարահիսար	—	1	—
Թարսուս (Տարոն)	1	3	—
Թալաս	—	1	—
Թեքիրտաղ (Ռոզոստո)	—	1	—
Թոքաթ (Եվդոկիա)	1	3	—
Թրապզոն (Տրապիզոն)	3	9	7
Քդի	—	1	—
Վան	5	24	—

Օսմանյան կայսրության հպատակ հայերը, 3 դեկտեմբեր 1839 թվականին հայտարարված Կյուհաննի բարենորոգումներին անմիջապես վերջ և մինչև Թուրքիո հանրապետության կազմությունը, տպագրական մարզին մեջ բուռն թափով շարունակվող իրենց գործունեության շրջանորհիվ, սատարած են թրքական տպագրության ճարտարավեստին, հրատարակության և գրավաճառության զարգացումին և այսպիսով նպաստած են օսմանյան մտավորականության վերափոխություններուն հետամուտ ամեն տեսակ շարժումներուն: Այստեղ կը ներկայացնենք միայն մի քանի փաստեր, որոնք կը հաստատեն այս իրողությունը: Բավական է նշել և ներկայացնել այն քանի մը ականառու անձնավորություններու կյանքն ու գործունեությունը, որոնք մեծապես նպաստած են 1839—1922 թվականներուն մեջ ինկած ժամանակաշրջանին օսմանյան Թուրքիո տպագրական և տառաստեղծութի աշխուժացման:

Պողոս Արապյան կամ Արապօղլու—Տպարանատեր և գրաձուլի: 1742-ին ծնած է Ակնի Ապուշիս գյուղը և 1835-ին մահացած է Կ. Պոլիս: Որդին է տպարանատեր Հովհաննես Աստվածատրյանի: Սուլթան Սելիմ Գ-ի իշխանության օրով, երբ տակավին փոքր էր, իր հոր հետ կուգան Կ. Պոլիս և կը հաստատվին Այազմա թաղը: Տպագրության և տպարանային արհեստը իր հորմեն սորվելիս վերջ, Պողոսը նախ իր հոր, ավելի հետո իր զավակներուն հետ, 70 տարի ծառայեց այս ասպարեզին մեջ և դարձավ Թուրքիո ամենեն նշանավոր տպարանատերը և միևնույն ատեն նպաստեց թուրքական տպագրության զարգացումին:

Արապյանը, ինչպես ըսինք, նախապես աշխատեցավ իր հորը տպարանին մեջ (1766—1769) և կարճ ատեն մը վերջ համբավի տիրացավ որպես տպարանատեր և գրաձուլի: Վրաստանի թագավոր Հերակլ

Բ-ի հրավերով գնաց Թիֆլիս (1781), վրացական տառեր պատրաստեց և ձուլեց: Վերակառուցեց վրաց թագավորին կողմից 1749-ին հիմնված տպարանը: Թիֆլիսի արքայական տպարանին մեջ իր տպագրած առաջին վրացերեն գիրքը կը կրե «Շեսխամապիրվելի ախլիսա ամիս ծիգնիսաթվիս սուպեճտավիսաթվիս» վերնագիրը: 1782-ին տպագրված սույն գիրքը կը բաղկանա 30 էջերով: Արապյան, 1782—1795 տարիներու ընթացքին նույն տպարանին մեջ 20 գիրք տպագրելեն հետո, անցավ էջմիածին և օժանդակեց այնտեղ հիմնադրվող առաջին տպարանի ղարգացումին: Արապյանը Կ. Պոլիս վերադառնալից վերջ նախ Հովհաննես և Պողոս անվան տակ տպարան մը հիմնեց (1795): Այս տպարանին մեջ ձուլեց «Նեսիհ» և «Թալիք» կոչված տառատեսակները, որոնք հետագային իր անունով «Արապօղլու» կոչվեցավ: Սուլթան Մահմուդ Բ-ը տպարան այցելելով կը հետևի կատարված աշխատանքներուն և արքունական արտոնագրով մը անոր «Պետական օրացույցներու» (Թաքվիմհանեի ամիրե) արհեստանոցի տնօրեն կը կարգեն (1816): Առաջին անգամ ըլլալով Արապյանին կը տրվի առանձնաշնորհը իր գըլխադիրին վրա կրելու տպարանային շքանշան: Հատուկ արտոնագիրով մը Արապօղլու Պողոսին և անոր որդիներուն Ասատուրին և Գալուստին կը շնորհվի «Թալիք» տառերու կաղապարներուն ձուլումը: Այսպիսով, քանի մը ամսվա մեջ կարելի կը դառնա այդ տառերով գիրքերու հրատարակութունը: 1820-ին Արապյանը իր անունով նոր տպարան մը

¹ Basbakanlik Arşivi (Վարչապետարանի արխիվ), Ճեմտեթ Մաարիֆի հրամանագիրները, 5933, 16 փետրվար, 1817: Ստորև կը ներկայացնենք Պողոս Արապյանի և իր որդիներուն տրված այն հատուկ արտոնագրի պատճենը հարազատ թարգմանությամբ, որով վստահված է թուրք տպագրության հիմքը կազմով «Թալիք» տառերու կաղապարներուն ձուլումը: Սույն փաստաթուղթը զոր քաղած ենք թրքական պետական արխիվի մը, իր ամբողջական բովանդակությամբ կը վավերացնեն հայերու գործոն դերը թրքական մշակութի զարգացման մեջ թանգիմաթեն ալ առաջ, 1817 թվականներուն:

«Ամենուն քաջ հայտնի է, որ արքունական տպարանին մեջ որպես գեղեցիկ ու գեղազրույթյան համար օգտագործվող «նեսիհ» տիպի տառերու առկալն և իզակալն անվանվող պողպատյա, պղնձյա և տարբեր տեսակի աղյուսակներու համար գործածվող զանազան սարքերն ու կազմածները 25 տարի առաջ վերստին հնարագործ ստեղծող Արապօղլու Պողոսն ու իր որդիները՝ Ասատուրն ու Գալուստը, ինչպիսի հսկա ջանքերու շնորհիվ վերանորոգած են այդ գիրքերու կաղապարները: Բոլորը անխտիր անոնց մասին գովեստով կը խոսին, մասնավորաբար «քամուա»-ի տպագրության համար օգտագործված կաղապարներու կրկին ձուլելուն, ինչպես նաև ճշտապահությամբ և ամբողջական նվիրումով ծառայության և իրենց ցուցաբերած հնարամտության ու վարպետության մասին: Հակառակ անոր, որ բացահայտ է, թե այս արքունական տպարանը ինչքան

կը հիմնե, իսկ Պետական օրացույցներու պատրաստման արհեստանոցին մեջ կը տպագրե առաջին թուրքերեն լրագիրը՝ «Բաքվիմի վեքային» (Դեպքերու օրագիր) 1831-ին և այդ լրագրի հայկական օրինակը հանդիսացող «Լրոյ գիր մեծ ի Տէրութեանն Օսմանեան»-ը 1832-ին: Պետական արհեստանոցի տառերը կը պատրաստվէին Արապյանի Օրթագյուղի ձուլարանը: Այս վիճակը տեւեց մինչև առաջին սահմանադրութեան հռչակումը (1876 թ.): Ենիշերինիի խռովութեան ատեն (1826), քաղաքն հեռու մնալու համար Արապյանը կը հաստատվի Օրթագյուղի Թաշ Մերտիվեն թաղը և այնտեղ կը հիմնե տպարան մը, ուր իր զավակներուն հետ կ'աշխատի մինչև իր մահը: Արապյանի մահէն վերջ, իր որդիները՝ Գեորգ, Գալուստ և Սիմոն Արապյան եղբայրները կը շարունակեն իրենց աշխատանքները մինչև տպարանի հրկիզումը՝ 1853 թվականին: Հըր-

օգտակար եղած է ժողովրդին, սակայն պաշտոնյաներու անուղադրութեան և այլ պատճառներու հետեանքով՝ մաշած, հնացած դազգլահները, սարքերն ու կաղամածները, վերահիշյալ Արապօղլու Պողոսի և որդիների՝ Գալուստի և Ասատուրի ջանքերուն շնորհիվ հիմնովին վերանորոգված են: Բացատրութիւն տալու պետք չենք զգար, թե այդ վերանորոգութիւնը ինչ բազմազան օգուտներ կրնար ապահովել ժողովրդին: Նթի «Ենեսիհ» կոչված գեղեցիկ տառերու վիճակը այսպէս է, բայց մյուս կողմն հրաման տրված է, որ «թա'ալիք» գիրերով ալ գրված գիրքերու (մասնավորաբար՝ դիվանական թղթերու և լուսանցքագրութիւններու ու ծանոթագրութիւններու) տպագրութիւնն ալ անհրաժեշտ է: Այս խնդրի առնչութեամբ ևս տեսակցութիւն մը տեղի ունեցած է Արապօղլու Պողոսի հետ: Տեսակցութեան ընթացքին Արապօղլու Պողոսը հայտնած է, որ պողպատյա «թա'ալիք» տառերու ձուլման պարտականութիւնը իրեն հանձնվելու պարագային, կարելի է քանի մը ամսվան ընթացքին «թա'ալիք» գիրերով գիրքեր տպել: Ներկայիս գիրքերն այնքան սուղ են, որ գրեթէ անկարելի է գտնել, քանի որ Իսթանպուլի մէջ պատահած հրդեհներու և մեկ տեղէն մյուսը տեղափոխելու հետեանքով զոյւթիւն ունեցող գիրքերու քանակը շատ նվազած է: Առկն զատ անհրաժեշտ է, որ տպարանը ավելցնէ իր բանվորներու քանակը և ճոխացնէ իր սարքերն ու կաղամածները: Այս կերպով կարելի չէ կասկած հարուցել, որ հրաման տրվելու պարագային, կարելի կ'ըլլա «Ենեսիհ» և «թա'ալիք» տիպի տառերով գիրքեր տպել այնպիսի որակով մը, որ ուրիշ որեւէ պետութեան մէջ իր նմանն ու հավասարը չունենա: Մասնավոր, որ Արապօղլու Պողոսի նման այս արվեստին քաջամուտ և այժմեւ նշանավոր քանի մը լեզուներու տառերուն հորինման ճարտարութիւնը ունեցող մարդիկ, եթէ պետութեան կողմէ հովանավորվին, անոնք ալ կը քաջալերվին: Հետեաբար, «Ենեսիհ» տառերուն վրա հսկելու և «թա'ալիք» տառերու ստեղծման համար եթէ այդ գործը իր որդիներուն՝ Ասատուրին և Գալուստին ևս սորվեցնեն, և անոնք ալ այդ գործը սորվիլը հանձն առնել երաշխավորեն, տպագրական արվեստին ծառայութեանն ամենվիճի չհեռանան և հավատարմորեն ու ճշտապահութեամբ ծառայեն, ինչպէս ուրիշներու, արժե անոնց առանձնաշնորհ տալ:

Կ Ե ի Բ

ՍԵՅՅԻՏ ԱՊՏՈՒՐՐԱԼԻՄ ՄՈՒԶԻՊ

դեհհն հետո տպարանի թրքական տառերու կաղապարները կը փոխանց-վին Յովային նախարարութիւն: Արապյան տպարանի գործունեութեան ընթացքին տպված ու հրատարակված են մոտ 150 թերթեր ու ամսա-գրեր, ինչպես նաև գիրքեր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՅՈՒՀԵՆՏԻՍՅԱՆ—Երաժիշտ, փորագրիչ, ոսկերիչ, տպարանատեր և գրածուլիչ: 1810 թվականին ծնած է Կ. Պոլսո Սամա-թիա արվարձանը և մեռած է 17 նոյեմբեր 1891-ին: Որդին է սուլթան Մահմուդ Բ-ի արքունի ճարտարապետ Գրիգոր Պալյանի օգնականներին երկրաչափ Գեորգի: Նախնական ուսումը կ'ստանա Սամաթիայի հայ-կական վարժարանը: Գեղաձայն ըլլալուն համար փոքր տարիքին կ'սկսի երգել Գուգլուճուքի հայկական եկեղեցիին մեջ: Կը սորվի եկեղեցական երաժշտութիւն և նոթա: Դաշնամուրի դասեր կ'առնէ իտալացիի մը: 15 տարեկանին կը մտնէ ոսկերիչի մը քով և կարճատեմ մը վերջ կը տիրապետէ արհեստին բոլոր նրբութիւններուն ու գործատիրոջը գործ-ընկեր կը դառնա: Միշտ մը կ'աշխատի Պետական օրացույցի արհես-տանոցը (1831), սակայն աշխատավարձի անբավարարութեան պատ-ճառով կը հեռանա հոնկէ և Զուխաճի խանին մեջ կը զբաղի աղամանդ ու գոհարեղեններ հղկելով և շատ շանցած կը դառնա ոսկերչագետ՝ ամիրաներու և աշքառու հայ ընտանիքներու: Ավելի հետո կը սկսի մո-տիկեն հետևիլ տառաձուլման և տպարանային արհեստին և արքունի ճարտարապետ Հովհաննես Սերվերյանի քաջալերութեան և նյութական օժանդակութեան շնորհիւ Սկյուտարի մեջ կը հիմնէ տպարան մը (1839): Այստեղ կը պատրաստէ հայկական տառերու 8 համարի տպատառերը (շրիֆտները): Նույն միջոցին իրենց հանձնված ճեմարան վարժարանի տպարանին մեջ հարյուր հազար օրինակով կը տպագրէ 1840 թվականի հայկական օրացույցը (նոյեմբեր 1839): 1842-ին, երբ օսմաներեն «թա'ալիք» գիրերու ձուլման և պատրաստութեան գործն իրեն կը հանձնվի և Պետական արհեստանոցի տնօրեն կը կարգվի, իր տպարանը կը փոխադրէ Զուքուր Զեշմե խանը և հոն իր ձուլած տառերով կը շարն և կը տպէ (Րիսալեի իթիքատիե)»-ն (Գիրք հավատարմութեան):

Ռաֆայել Գազանճյանն վերջ Մյուհենտիսյանը Ամերիկային բե-րած մեքենաներով և այլ կազմածներով բարենորոգած իր տպարանին մեջ տպեց 5000, 1000, 500, 250 ղրուշնոց տոկոսաբեր (ֆայիլլի) թղ-թաղրամները (1844): Նույն տարին Պետական տպարանին մեջ իր ա-գործած հղկված «թա'ալիք» տառերուն համար 10000 ղրուշով պարգե-վատրված ըլլալուն մասին փաստաթուղթեր կան պետական արխիվ-

ներուն մեջ²։ Ավելի վերջը Փարիզին բերել տված նոր մեքենաներով արդիական տպարան մը հիմնեց Ղալաթիո ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին ճիշտ դիմացը քարաշեն շենքի մը մեջ (1856)։ Այս նոր մեքենաներով տպեց Միհրան Տյուզ պեյի կողմն հղացված քոնսոլիտների (պետական փոխառության պարտատոմսերի) 26 մայիս 1856 թ., 1000-նոց և 100-նոց արժեթուղթերը («Թահվիլաթը մյումթազե»), 1857 թ., մաքսատան տնօրեն Մկրտիչ Ճեզայիրեանն էֆենտիի կողմն հանձնարարված պետական պաշտոնաթուղթերն ու աղյուսակները։ Երբ կառավարութունը նոր որոշմագիրով մը թղթադրամները շրջանառութենն հավաքեց, հատկապես այդպիսի գործերու համար բերված մեքենաներն ու կազմածները այլևս պիտանի չեղան, մեծ պարտքերու մեջ մխրձված Մյուհենտիսյանը ստիպված եղավ փակել իր տպարանը։ Այս դեպքին վերջ ան դիմեց նշանավոր գեղագիր և Ռումելիի գլխավոր դատավոր Մուսթաֆա Իզզեթ էֆենտիին (1801—1876) և, անկե «նեսիհ» գիրերու օրինակներ առնելով, փորագրեց անոնց «արական» կաղապարները։

Այսպիսով, օսմանյան ժամանակաշրջանի տպագրության բնագավառին մեջ գործածված տառերն ալ սուլթան Ալիդի օրով գտան իրենց վերջնական ձևերը։

Մյուհենտիսյանի ձուլած կաղապարները օգտագործվեցան մինչև լատինական տառերու ընդունման տարիները։ Մյուհենտիսյանն իր ստեղծած «նեսիհ» տիպի տառերով տպագրեց թուրքերեն լեզվով բանաստեղծություններու ժողովածու մը և ներկայացուց ժամանակի պետական ավագանիներին ումանց։ Եպարքոսը եղելությունը բարձր գրնահատեց և Մյուհենտիսյանին ըսավ. «Դուք հոյակապ հիշատակ մը նվիրեցիք, ազգովին պետք է ձեզ շնորհակալ ըլլանք»։

Հովհաննես Մյուհենտիսյանը նոր ձուլարան մը հիմնեց Գատրոգյուղի իր տան պարտեզին մեջ և հորինած տառերու կաղապարներով պատրաստեց նաև Վարաքայի Սահիհն (Վավերացված դրոշմանիշներ) կոչված դրոշմաթուղթերու կաղապարները։ Այս կաղապարները կը նսեմացնեին այդ ժամանակաշրջանին Եվրոպայի մեջ պատրաստված կաղապարները։ Մյուհենտիսյանը 76 տարեկանին փորագրեց 16 համարի «նեսիհ» տիպի (1886) 79 տարեկանին 6 համարի «նեսիհ» տիպի (1889) և 81 տարեկանին ալ, այսինքն իր մահն քանի մը օր առաջ, ձեռագրատիպ 24 համարի տառերու պողպատյա «արական» կաղապար-

² Başbakanlık Arşivi (Վարչապետարանի Արխիվ), Ներքին գործերու հրամանագիրներ, 4623, 30 հոկտեմբեր, 1844։

ները: Ասոնք բոլորն ալ հետագային կոչվեցան «Մյուհենտիսյան» տառեր:

Մյուհենտիսյանը տարի մըն ալ գործակցեցաւ Գրիգոր Ռաֆայելյանի հետ (1882—1883), որ Պեյօղլուի՝ իր բնակարանին մէջ ձուլարան մը ուներ: Բացի թուրքերէն տառերէն, զանազան տարիներու ընթացքին ան փորագրեց 11, 8, 14 և 18 համար շրիֆթներով գլխատառ և մանրատառ 14 տեսակ հայկական գիրեր և երաժշտական նոթաներ (1846—1855): Ան տարբեր նյութեր բովանդակող մեծաթիվ հայերէն և քանի մը հունարեն գիրքեր (1840—1873), լրագրեր տպեց (1853—1863): Իր փորագրած օսմաներէն տառերով կազմեց գեղատիպ ժողովածու-ալպոմ մը և ելեմտական նախարար Մահմուդ Ճեւալեդդին փաշայի միջոցով այն ընծայեց սուլթանին: Վերջինս զայն պարգևատրեց 4-րդ կարգի Մեհիհիւլէ և գեղարվեստից (Սանայիի նեֆիսե) շքանշաններով: Իր մահովան ատեն՝ մամուլի գործիչները գովաբանեցին, մինչև անգամ չ'զլացան հռչակել զայն որպէս «թուրքերու Գուտենբերգ»: Դարձաւ Մյուհենտիսյանն է, որ Թուրքիայի մէջ առաջին անգամ կիրառած է կալվանոյի ստերիոտիպի (ցինկոգրաֆիայի) մեթոդները:

ԽԱՋԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ—Տպարանատեր և գրաձուլիչ: 1850 թվականին ծնած է Իսթանպուլի Պալաթ արվարձանը և մեռած է 6 հուլիս 1932 թվականին: Հայրը, որուն անունն էր Գեորգ, Ամասիացի՝ դերձակ մըն էր: Նախնական կրթությունը ստացաւ Պալաթի Խորենյան նախակրթարանը: 14 տարեկանին աշխատեցաւ վեզիր խանին մէջ գրաձուլիչ Տիգրան Ասլանյանին քով: 10 տարի վերջ գործատեղին փոխանցեց իր անունին (1880): Գեորգյանը կարճ ժամանակի մէջ 11 տեսակ տառատիպեր ստեղծեց և անոնց կաղապարները պատրաստեց: Այս տառերը, որոնք ձևով կը լրացնէին Արապյան տառերը, երկար տարիներ գործածվեցան թրքական տպարաններու մէջ: Այդ տառերէն քանի մը հատը հետեւյալներն են՝ «Նեսիհ» (8, 12, 24 համար շրիֆտով), «Հարեբեխ» (ձայնանիշային 18 և 36 համար շրիֆտով), «Րիք'ա» (ձեռագրատիպ 18 համար շրիֆտով), «Քյուֆի» (16 համար շրիֆտով): Իր գործատեղին նախ փոխադրեց Օսման Պեյի տպարանը, այնտեղէն ալ Պապը Ալի: Ատեն մը աշխատեցաւ Գեղարվեստի Ակադեմիան (1895—1896), 2-րդ սահմանադրութենէ վերջ Բեշտիյեի Իթտամ խանը և ամենէն վերջն ալ Ճաղալօղլու վրա հիմնեց իր գործատեղին: Խաչիկ էֆենտի, որ իր ժամանակաշրջանի տպագրական ասպարեզին մէջ կարևոր դիրք մը կը գրավէ, իր հնարած գեղատիպ տառերէն զատ Ահմեթ Միտհաթ փաշայի

առաջարկով 2200 կտորի բաղկացած օսմաներին այրուբները նվազեցուց 1600 կտորի: Այս առիթով ան արժանացավ երկու շքանշաններու: Հանրապետության հաստատումեն վերջն ալ պարգևատրվեցավ «Կըրթական մետալ» (Մաարիֆ մատալյասը) շքանշանով (1923):

Թուրքիո մեջ առաջին թղթադրամը տպագրած է Ռաֆայել Գաղանճյանը (1842): Ան մեծ ծառայութիւններ մատուցած է ժողայիններու բարձրագույն ուսումնարանի վիմատիպ քարտեզներու կաղապարներու փորագրութեան, նոր թղթադրամներու կաղապարներու փորագրութեան և տպագրութեան գործին: Այս առիթներով և Պետական փողերանոցի մեջ ալ կատարած իր ծառայութիւններուն համար արքունական հրամանագրով³ մը պարգևատրված է «Բարձր շքանշանով» (Նշանը Ալի):

Մյուհենտիսյանի մահէն վերջ Մաթեոսյանն ալ թուրքերին նոր տառեր ձուլած և կաղապարները պատրաստած է: Նշված անձնավորութիւններին զատ աչքառու դեմք մը եղած է Ճանիկ Արամյանը, որ 19 տարի Փարիզ ապրած և հոն ունեցած է իր տպարանը: Ան ստեղծած է 73 տեսակ հայերէն գիրեր: Կ. Պոլիս վերադառնալուն պէս նշանակված է Արքունի տպարանի տնօրեն (1865):

Թուրքիո մեջ պատի օրացույցներու հղացումը տպարանատեր Գեորգ Զարդարյանին կը պատկանի: Մինչև իր մահը (30 մայիս 1880) այլ և այլ լեզուներով պատի օրացույցներ տպագրող Զարդարյանը պատրաստած է նաև Օսմանյան պետութեան գումարներ և շատ մեծ չափով՝ 24 կտորներ կազմված մեկ քարտեզը: Սիկարեթի թուղթ պատրաստող Կարապետ Պերպերյանը հղացած է Բեռա անունով քարտեզավոր սիկարեթի թուղթերը: Կ. Պոլսի մեջ առաջին անգամ Միսաք Գոշունյանն (Քասիմ) է, որ իր հիմնած լրագրին մեջ տպած է եվրոպական առևտրական հաստատութիւններու գովազդերը (ռեքլամները): Գոտներեբգ տպարանի տեր Նրվանդ Մսրլյանն ու գործընկերը Կ. Պոլսո մեջ առաջին անգամ պրակներով գիրք ծախելու սիստեմն են որդեգրած: Պուլղարներն գիրերը առաջին անգամ փորագրած և ձուլած է Թաղեոս Տիվիթճյանը, որ ատկե զատ իր հնարած գիրերով տպագրած է բազմաթիվ պուլղարներն գիրքեր:

Առաջին արձմիռնական շարժումները տպարանագործութեան ասպարեզին մեջ եղան բավական նշանակալից: Հայ տպարանագործներու կողմն Կ. Պոլսո մեջ հիմնադրված են «Գրաշարներու ընկերու-

³ Basbakanlik Arsivi (Վարչապետարանի արխիվ), Արտաքին գործերու հրամանագիրներ, 757, 4 փետրվար 1842:

թյունը» (1880, հիմնադիր՝ Ա. Մավյան), «Գրաշարներու խնայողության սնտուկ», «Օսմանյան տպարանային բանվորներու միութիւն») հիմնադիր՝ Գարեգին Կողիկյան), «Օսմանյան համագործակցական ընկերութիւն» (հիմնադիր՝ Բլուզանդ Պողաճյան), արհմիութենական կազմակերպութիւնները:

Ատոնցմէն ամենակարեւորն էր «Օսմանյան տպարանային բանվորներու միութիւնը»: Կովկասէն Կ. Պոլիս եկած սոցիալ-դեմոկրատ Գարեգին Կողիկյանն է այս միութիւնի հիմնադիրը: Կողիկյանը ծանոթ էր բանվորական շրջաններու մեջ կատարած իր գործունեությամբ և կարգ մը հրատարակութիւններով: Թուրք և հայ տպարանային բանվորները ի մի կը հավաքեւ և ժողով գումարելով անոնց կը բացատրեւ միութիւն կարեւորութիւնը, որմէ հետո կը խմբագրվի կանոնադրութիւն մը և կը տպվի Կիլիկիա տպարանը և լույս կը տեսնեւ առանձին գրքույկով մը:

Միութիւն կենդրոնը կը գտնվիր Պետլուք Ծնի խանի մեջ (Մեծ նոր խան): Ունեւ նաև երկու մասնաճյուղ Պապը Ալիի պողոտային վրա: Միութիւնը, բլուղջին հետզհետեւ ավելցնելով, կը դառնար մեծ կազմակերպութիւն մը: Նրա ազդեցութիւնի աճի շնորհիվ աշխատանքային ժամերը 10—12 ժամէն իջեւ էին 8-ի, բանվորներու աշխատավարձերը կրկնապատկված էին և բազմաթիւ տարակարծութիւններ հարթված: Միութիւնը գոյատևած է մինչև մարտի 31-ի դեպքը (երիտթուրքերի երկրորդ հեղաշրջումը, 1909):

Իսթանպուլի հայ տպարանատերերու գործունեութիւն տևողութիւնը տևեց դարեր: Աստվածատուր Դպրեն ետք, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, Օսմանյան կայսրութիւնի մեջ հայ տպարանատերերու և անոնց անունը կրող տպարաններու գործունեութիւնը կը ներկայացնենք ստորեւ ժամանակագրական կարգով:

Սարգիս Դպիր (1703—1721), Տիրացու Գեորգ (1705), որդին՝ Մարտիրոս Դպիր (1721—1752), Պետրոս Լատինացի (1704—1712), Թոքաթցի Սարգիս վարդապետ, Սվազցի Բարսեղ և Հակոբ եղբայրներ (1735—1740), անոնց որդիները՝ Սարգիս և Միքայիլ (1740—1776), Գաբրիել Դպիր Բարսեղյան (1745—1750), Թրակիացի Աբրահամ Դպիր (1737—1746), Զինչին Օհաննես Աստվածատուրյան (1746—1767), Ակնցի Ստեփանոս Պետրոսյան (1750—1776), իր որդին Պողոսի հետ (1776—1790), Հովհաննես և Պողոս եղբայրներ (1766—1769), Հովհաննես և որդին Պողոս Աստվածատուրյան (1777—1790), Մկրտիչ Ամիրա Միրիճանյան (Գումգափու, Յըլըճը փողոց, 1790—1805), Մաթեոս Դպիր (Պալաթ, 1800—1825), Պողոս Հովհաննեսյան (Քյուրքլու խան, 1799—

1819), Ապուլեիացի Պողոս Արապյան (Օրթագյուղ, Քյուրքչուխ խան, 1820—1835), Արապյան եղբայրներ (Օրթագյուղ, 1836—1853, Կետիկի Մուսթաֆափաշա խան, 1855), Պողոս Հովհաննեսյան և կամ Արապյան (Օրթագյուղ, 1777—1826), Ակնցի Անդրեաս Վարդապետ Նարինյան (Գումգափու, Սուրբ Աստվածածին մայր եկեղեցի, 1817—1825), Աբրահամ Ամիրա. Թերզյանց (Պեյաղիտ, Հասան փաշա խան, 1824—1826), Հովհաննես Մյուհենտիսյան (Չուխաճը խան, Սկյուտար, Ղալաթիա, Գատրգյուղ, Պեյօղլու, 1839—1891), Հարություն Մինասյան (Վեղիր խան, Ասմալթը Չամը խան, 1860—1871), Ա. Ճեվահիրճյան (Իմամը Ալի խան, 1844—1865), Կարապետ Ություշյան (Չինիլի խան, Ղալաթիա, 1855—1883), Հովհաննես Մարգարյան (Սկյուտար, 1853), Հարություն (Արթին) Փափաղյան (Ճեվտհիրճյան 1853—1879), Թահմիզճիյան (Էմիրլեր խան, 1854—1862), Հովհաննես Չամուրճյան Տերոյնց (Վեղիր խան, Քեպեճի խան, Աշիր էֆենտի խան, 1854—1888), Մկրտիչ վարդապետ Խրիմյան (Սկյուտար, 1855, Վան, 1852, Մուշ, 1863), Թադեոս Տիմիթճիյան (Վեղիր խան, Ֆեներ-Հալիլ-Քիրեմիթ մահալլեսի, 1856—1879), Ռուբեն Քյուրքչուկյան (Ֆինճանճըլար Եղրուլու-Ամերիկյան Պրոտ հրատարակչական գրասենյակ, Պալալ Հաուզի տեղը, Ղալաթիա, 1857—1877), Բալլի խան, 1901—1912), Միհրան Մարտիրոսյան (Պապը Ալի ճատտեսի, 1903—1909), Օննիկ Արղումանյան (Հակոբյան խան, 1908—1912), Միսաք Գոշունյան (1908, Արշակ Կարոյան (Պապը Ալի Իթում խան, 1908—1912), Հովնան Փալաղաշյան (Մուլա Թաշ, Պեոյուք Ենի խան, 55, 1801—1912), Տիգրան Տողամաճյան (Փարիզ 18, Կոպըլեն փողոց, Կ. Պոլիս Մուլա Թաշ խան, 1894—1912), Հովհաննես Ազնավուր (Պապը Ալի ճատտեսի 48, 1908—1912), Երվանդ Մսուրյան և Գարրիել Հովհաննեսյան (1902—1912), Մերուժան Պարսամյան (Ղալաթիա ճամի գափըսը 9, 1909—1915), Ատոմ Շահեն (Պեյօղլու Ենի Չարըը 52, 1909—1915), Մեսրոպ Բեսիմճի և Աբիկ Վանլյան (Մուլա Թաշ 16, 1909—1915), Վաղինակ Սմբատ Բյուրատ (Զեմպերիթաշ, Մուլա Թաշ, Պեյօղլու Այասփաշա, Իսթանպուլ Օրհան-պեյ խան 25, 1908—1915), Հայկ Թիրաքյան (1911—1915), Պետրոս Նշանյան և Արշակ Պապիկյան (Մուլա Թաշ, 1910—1915)։

Կ. Պոլսո մեջ գործած տպարանների շարքին ստորև ժամանակագրական կարգով կը նշենք նաև հետևյալ անվանի գրաձուլիչների անուններն ու անոնց ձուլարաններու գտնված վայրը։

Գրիգոր Ռաֆայելյան (Ճաղալօղլու ճատտեսի Սեթյան խան, Գահիրե, 1846—1811), Հովհաննես Մյուհենտիսյան (1839—1891), Խաչիկ

Գևորգյան (Վեդիբի խան, Պապը Ալի Բեշատիյե Իքտամ խան, Ճաղալ-
օղլու ճատտեսի 34, 1870—1915), Հակոբ Մերունյան (Ղալաթիա, Պեյ-
օղլու, Պապը Ալի ճատտեսի, Իքտամ խան, Սոֆիա, Իսթանպուլ Շարբ
խան, Ղալաթիա Փերշենպե Փազարը, 1896—1908), Միհրան Տյոքմեհյան
(Զեմպերլիշաթ, Պապը Ալի, Մեսերբեթ պանդոկի դիմացը 1, ^
1909), Հովսեփ Գավաֆյան (Քյուրքչու խան, 1860—1892), Ճանիկ
Արամյան (Փարիզ, Մարսել, Կ. Պոլիս Մըսըր Զարըսըրի մոտ, Ճամլը-
խան, Զաքմաքճըլար Ուզուն Զարըր փողոց, Շերիֆփաշա խան 13, Զաֆ-
մաքճըլար Հակոբյան խան 12—16, 1856—1879): Արշակ Հակոբ Պոյաճ-
յան (Վեդիբի խան, Ղալաթիա, Ամերիկա խան, 1869—1872), Գևորգ
Զարդարյան (Սուլթանհամամ, 12—14, 1870—1887), Պետրոս Ճեզվե-
հիյան (^ —1882), Հարություն Մարգարյան (Քյուրքչու խան, Յըլ-
տըղ խան, Էօլլու Զըքմաղ խան, 1870—1878), Վահրամ Մարգարյան
(1880—1911), Սամվել Պարտիզպանյան (Յուսուֆյան խան, 12, 1813—
1912), Սիմեոն Միքայելյան (Պետուբ ենի խան, 10, 1874—1878), Նդիա
Տնտեսյան (Յուսուֆյան խան, 17, Պահլեզափը Էսատէֆենտի խան,
13, 1872—1882), Կարապետ Քեշիշյան (1875—1910), Հմայակ Դի-
մաքսյան (ենիգափու, 1875—1881), Միքայել Սարգյան (Մեհրամ,
Էօրյուճյուկեր ճամիի, Բյուշտյու էֆենտի խան, Պապը Ալի ճատտեսի
38, 1869—1902), Արամ Աշըրյան (Սյումպյուլլու խան 335, Յուսուֆ-
յանխան 15, 1878—1883), Հովհաննես Մանուկյան (Աշիրէֆենտի խան,
Էպյուզդիյա տպարան, Ղալաթիա Շահսուվար փողոց 37, 1877—1895),
Գարեգին Պաղտատլյան (Սուլթանհամամ ճատտեսի 14, Սիրքեհի 18,
Սալթըմ Սեոյութ 41, 1880—1896), Սերվիշեն Զաքըրյան Բեսիմփաշա
խան, Ֆընտըզլյան խան, Հասեբի Համամ փողոց, Սուլթանհամամ հո-
ճա խան ճատտեսի, 1880—1912), Տիգրան Ժիվեհիկյան (1881—1912),
Նշան Պերպերյան (Էսքի Զապթիյե, Իքտամ խան, 1882—1907), Ստե-
փան Տամատյան (Ղալաթիա, Նորատունկյան խան, 1883—1889), Հով-
հաննես Թուրյան (Պեյօղլու, Շիշլի փողոց 5, 1884—1889), Օննիկ Բար-
սեղյան (Ղալաթիա Փերշենպե փազարը, Սաքսը խան, Կյուլզատե խան
7, 1888—1909), Սահակ Նիկողոսյան (Սաղըր խան, Ֆինճանճըլար,
Սյումպյուլլու խան, 1885—1889), Գարեգին Բարսեղյան (Ղալաթիա
Փերշենպե Փազարը Կյուլզատե խան, 7, 1909—^), Գասպար Գալ-
սերյան (Պապը Ալի ճատտեսի 25, 1888—1890), Գրիգոր Գալսերյան
(Պապը Ալի ճատտեսի, 1899—1903), Հովհաննես Ֆերիտ Գալսերյան
(Պապը Ալի ճատտեսի 54, ^ —1909), Ներսես Արամյան (Հակոբյան
խան 26, 1879—1898), Թազվոր Սանճագճյան (Պեյօղլու Հալեպ Զար-

(Սյունյացիք խան 12, 17, 18, 19, 21, 1891—1899), Բորոս Սազա-
յան (Ղալաթիա հալիլիաշա խան, Քուրշունլու խան 4—7, 1892—1911),
Վահրամ և Հրաչյա Տեր-Ներսեսյան եղբայրներ (Սուլթանհամամ, Մե-
սստիթ խան 2—3, Սիրքեճի:

Սույն հոգվածով մտադրվեցինք անդրադառնալ Օսմանյան հպատակ
ոչ մահմեդական ժողովուրդներու և մասնավորապես հայերու օգտաշատ
դործունեությանց մեկ մասնիկին միայն: Հայերու բերած բազմապիսի
նպաստներու շղթային մեկ օղակը կը կազմե թուրք տպագրական ար-
վեստին հիմնադրման և զարգացման, ինչպես նաև տպարանային սեկ-
տիբորիզմի կազմավորման էական դործին մեջ իրենց ցուցաբերած դերը:

Б. М. ТУГЛАДЖЯН

АРМЯНСКОЕ КНИГОПЕЧАТАНИЕ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ И ВКЛАД АРМЯН В РАЗВИТИЕ ТУРЕЦКОЙ ПЕЧАТИ

Резюме

Армяне Османской империи намного раньше турок приобщились к западной цивилизации и, естественно, были более подготов-
лены к заимствованию прогрессивных идей и их практическому при-
менению. Рассматривая социально-политическую и культурную
деятельность армян в период с 1839 по 1923 гг. (от провозглашения
танзимата до создания Турецкой Республики), следует отметить,
что армяне имели свою национальную конституцию уже в 1863 г.,
тогда как первая турецкая конституция, составленная Григором
Отяном по поручению Мидхат-паши, была провозглашена лишь в
1876 г. Велики были заслуги армян и в области книгопечатания.
Еще в 1567—1569 гг. Абгаром Тохатеци было осуществлено изда-
ние шести армянских книг. Большой вклад в развитие турецкого
печатного дела внесли такие армянские деятели, как Погос Ара-
пян, или Араб-оглу, и его сыновья Геворг, Галуст и Симон, Оганес
Мюхендисян, Хачик Геворкян и др. Следует отметить, что выпуск
первых бумажных денег в Турции также был осуществлен армя-
нином—Рафаелом Казанджяном—в 1842 г. Много армян было и
в профсоюзном движении работников печати, в стамбульских ти-
пографиях.

- 1 Ի. Ագապյան, Ժամանակ յիշատակարան, Իսթ., 1948, էջ 34—40.
- 2 Ղ. Ալիշան, Հայ Վննես, 1896, էջ 160, 329.
- 3 Ա. Ալպոյանյան, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. 2, Գահիրէ, 1937, էջ 2038, 2061.
- 4 Հ. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, Երևան, 1959.
- 5 Նեբդարեան պատմութիւն Պալարի սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ, 1927—1931, Իսթ., 1931, էջ 272.
- 6 Գ. Զարգանալյան, Հայկական մատենագիտութիւն, Վննետիկ, 1883.
- 7 Վ. Զարդարյան, Յիշատակարան, հ. 2, էջ 388.
- 8 Գ. Զարգանալյան, Պատմութիւն հայերեն դպրութեան, հ. 2, Վննետիկ, 1877, էջ 277.
- 9 Գ. Զարգանալյան, Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութեան մինչ առ մեզ, Վննետիկ, 1895, էջ 47—48, 156.
- 10 Խնոյիկ, Տիպ ու տառ, Կ. Պօլիս, 1912, էջ 66—71.
- 11 Վ. Թորգոմյան, Երեմիա Չէլէպիի Քէօմիւրճեան Իստամպուլոյ պատմութիւն, հ. 1, Վննետիկ, էջ 345—346.
- 12 Գ. Լաւոյան, Հայ գրքի և տպագրութեան արվեստը, Երևան, 1958, էջ 64—63, 160.
- 13 Լեւ, Հայկական տպագրութիւն, հ. 2, Բիֆլիս, 1902, էջ 120.
- 14 Գ. Կորոտյան, Հայկ. տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964, էջ 5—7.
- 15 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, հ. 2, Երեւան, 1959, էջ 26—35.
- 16 Ս. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտութիւն և հայագիտութիւն նոր կեանքի, հ. 2, Վննետիկ, 1909.
- 17 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. 3, Վննետիկ, 1786, էջ 657.
- 18 Հ. Պալեյան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 153—157.
- 19 Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1932, էջ 79—80.
- 20 Հ. Պետրոսյան, Հայերու սատարը թուրք մշակույթի և տնտեսութեան, Գահիրէ, 1976, էջ 32—35.
- 21 Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հ. 1, Երևան, 1973, էջ 141.
- 22 Գ. Ստեփանյան, Հայաստան թուրքերեն հայ մամուլը, Երևան, 1963.
- 23 Հ. Սիրունի, Պոլիս և իր դերը, հ. 1, Պէլլուս, 1965, էջ 67—68, 251, 252.
- 24 Մ. Ուզուրյան, Պատմութիւն հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվորնոյ քաղաքի, Վննետիկ, 1891, էջ 223.
- 25 «Թանաւէր հանդէս», 1903, էջ 203—207.
- 26 «Աւեկի» (օրաթերթ), 8 հուլիս 1932.
- 27 Նրեան, 1861, թիվ 113, էջ 143, թիվ 119, էջ 352—353, 1864, թիվ 6—7.
- 28 «Հայրենիք» (օրաթերթ), 1982, թիվ 9, էջ 85.
- 29 «Հանդէս ամսօրեայ», հուլիս 1890, 1906, էջ 323—324, 1911, էջ 478, 1912, էջ 387.
- 30 «Մանգուսի էֆյառ» (օրաթերթ), թիվ 3192, 3206, 3153, 3145.
- 31 «Մշակ» (օրաթերթ), 1878, թիվ 7.
- 32 A. Gövsa, Meşhur Adamlar. c. 3, s. 1126.
- 33 Felek, gazetesi 1882, s. 171—173, 174—175, 199—200, 211, 220, 237—238.
- 34 R. Sevengil, Yakın çağlarda Türk Tiyatrosu. c. I, ist. 1934, s. 42—43.